# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առինջ բնակավայր 28.07.2025 թ.

2025 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Նյու Ռոմա» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Առինջ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Առինջ բնակավայրի վարչական ղեկավար Էմիլ Ղուկասյանը և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախագծի հեղինակ Լևոն Մխոյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց շինարարական աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները և խոսքը փոխանցեց ընկերության բնապահպանական մասի պատասխանատու Արթուր Մինասյանին: Մինասյանը ներկայացրեց բնակելի թաղամասի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են կապված փոշու արտանետումների հետ,

որի ազդեցությունը մեղմացնելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան:

Հարությունյանը նշեց, որ լրամշակման ժամանակ անդրադարձ չի կատարվել քաղաքաշինության կոմիտեի և Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայացված դիտողություններին: Նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ հաշվետվությունում կատարվել է համապատասխան փոփոխությունը և բոլոր հարցերին տրվել են պատասխաններ: Քննարկվեց նաև նախատեսվող գործունեության և հիմնադրութային փաստաթղթին դրա համապատասխանության հարցը: Հարությունյանը նշեց, որ անդրադարձ չի կատարվել հիմնադրութային փաստաթղթին, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ համայնքի կողմից ստացվել է համաձայնություն և ունեն նախագծման թույլտվություն: Նշվածի վերաբերյալ Հարությունյանը փաստեց, որ օրենքի պահանջ է, որպեսզի հաշվետվությունում վերլուծվի և տրվի տեղեկատվություն նախատեսվող գործունեության և հիմնադրութային փաստաթղթի համապատասխանության վերաբերյալ: Բացի այդ, քաղաքաշինության կոմիտեի կողմից առաջարկություն է ներկայացվել փաթեթում ներառել գոտևորման նախագծից հատված, որում հստակ նշված կլինի տվյալ տարածքի հարկայնության վերաբերյալ տեղեկատվություն:

Հարությունյանը հետաքրքրվեց նաև կոյուղու և կեղտաջրերի հեռացման վերաբերյալ, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչը նշեց, որ կեղտաջրերը հեռացվելու են Առինջ մոլի կոյուղու միջոցով, որը կառուցվել է իրենց միջոցների հաշվին: Պարզաբանվեց նաև նախատեսվող բնակարանների քանակի հարցը, քանի որ նախագծում և ՇՄԱԳ հաշվետվությունում առկա էր անհամապատասխանություն:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Քննարկվեցին նաև թաղամասի կառուցման հետ կապված այլ հարցեր:

Բնակիչների կողմից հարցեր չհնչեցին:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Նյու Ռոմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ա. Կեսոյան**